ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից 04.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/86 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն 04.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Գավառի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լուսասյուների և ժամացույցի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1 որոշմամբ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը:

www.gnumner.am և www.armeps.am համացանցային պաշտոնական կայքերում հապարակվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենա 2018թ. հոկտեմբերի 5-ին ժամը 12:00-ին:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից բողոքի իրավական հիմք նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը)

գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն հայտնել է, որ Պատվիրատուն «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ սահմանել է, որ նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը: Մինչդեռ նշված ձևակերպումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված

պահանջներին, քանի որ «տեխնիկական բնութագրին համապատասխան» եզրույթը իր մեջ պարունակում է բավականին հակասական ձևակերպումներ, այնինչ ուղղակի կարելի էր որպես նմանատիպ պայմանագիր համարել լուսասյուների մատակարարված լինելը: Այս դեպքում շատ հնարավոր է, որ մատակարար կազմակերպությունը նախկինում կատարած ունենա բազմաթիվ լուսասյուների մատակարարում, սակայն ոչ օրինակ՝ «Հինգերորդ լուսամփոփը տեղադրված է կենտրոնում լուսասյան վրա: Լուսամփոփները վեցանկյուն, ապակին՝ ոչ թափանցիկ: Լուսամփոփի լամպերը 95WT էկոնոմ դասի», ինչպես նշված է տեխնիկական բնութագրում: Այս պարագայում Պատվիրատուն պարտադրում է, որ մասնակիցները ունենան հենց ամբողջությամբ նույն բնութագրին համապատասխան նախկինում կատարված աշխատանք, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ նման խտրական մոտեցման պատճառով արհեստական խոչընդոտ է ստեղծում գնման ընթացակարգի հնարավոր մասնակիցների ընդլայնման համար և փաստացի արհեստականորեն սահմանապակում է մասնակցության իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը, Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն հայտնել է, որ վերը նշված իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ լուսասյուների և ժամացույցի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և Գավառի քաղաքապետարանի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Կարգի 61-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերում նման որակավորման չափանիշեր սահմանելով Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար: Նման չափանիշները հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Գավառի քաղաքապետարանի կողմից լուսասյուների և ժամացույցի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

2. Փոփոխել Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանված «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը» պահանջը և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

3. 1-ին կետով նախատեսված պահանջը բավարարելը անհնարին լինելու դեպքում՝ «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.10.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գավառի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 08.10.2018թ. ուղղված թիվ 1193 գրությամբ հայտնել է հետևյալը՝

«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքի հիման վրա Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վերոնշյալ ընթացակարգը ինքնաբերաբար կասեցվել է:

Ընթացակարգի հրավերի փաթեթում տեղ են գտել մի քանի տեխնիկական սխալներ, որոնք հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է հնարավորինս սեղմ ժամկետներում «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Գավառի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գավառի քաղաքապետարանի կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի լուսասյուների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցում:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածում:

3. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային

արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի 04.10.2018թ. բողոքը, Գավառի քաղաքապետարանի 08.10.2018թ. թիվ 1193 գրությունը, «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները,

կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Գավառի քաղաքապետարանի կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի լուսասյուների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ սույն

ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը:

Ուսումնասիրելով Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի լուսասյուների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանված պահանջը, գտնում եմ, որ այն կազմվել է Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջին անհամապատասխան, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքների համանմանությունը որոշվում է հաշվի առնելով հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող ***տնտեսական գործունեության*** ***նույն խմբերում*** դասվելու հանգամանքը, իսկ տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում **տեխնիկական բնութագրին համապատասխան** լուսասյուների մատակարարված լինելը:

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտել է Կարգի 65-րդ կետով, Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, ուստի գտնում եմ, որ սույն մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու բողոքաբերի երկրորդ պահանջին, ապա սույն մասով արձանագրում եմ, որ նշված պահանջը չի հանգեցնում բողոքով բարձրացված հարցի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից 04.10.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանված «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տեխնիկական բնութագրին համապատասխան լուսասյուների մատակարարված լինելը» պահանջը և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2. «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով բողոքաբերի պահանջը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**